ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և ԳԱՂՏՆԻ ԳՐԱԽՈՍՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Հոդվածները կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով:

2. Հոդվածը պետք է լինի հետևյալ բովանդակությամբ.

1) Հոդվածի վերնագիրը,

2) Հեղինակի տվյալները (անուն ազգանուն, պաշտոն, առկայության դեպքում՝ գիտական կոչում (աստիճան) և հեռախոսահամար),

3) Ամփոփագիրը և բանալի բառերը,

4) Հոդվածի բուն հետազոտությունը,

5) Եզրակացությունը,

6) Գրականության ցանկը:

Ընդ որում՝ 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջներն անհրաժեշտ է ներկայացնել նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով, իսկ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով հոդվածների դեպքում՝ նաև հայերենով:

3. Գիտական հրատարակություններում տպագրվող աշխատանքների ամփոփագրերը պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Անգլերեն և ռուսերեն ամփոփագրի առկայությունը պարտադիր է, ընդ որում՝ 150-ից 250 բառի սահմաններում, եթե նյութն անգլերեն չէ:

4. Նյութերի ծավալը որոշելիս հիմք են ընդունվում հետևյալ պահանջները՝

1) տեքստը տպագրվում է A4 ֆորմատի չափի թղթի վրա՝ 1,5 տողաչափով,

2) հիմնական տեքստի տառերի չափը՝ 12,

3) տողատակերի տառերի չափը՝ 10,

4) լուսանցքները՝ ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ:

Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ: Հայերեն ներկայացված հոդվածը պետք է շարադրել «GHEA Grapalat», իսկ ռուսերեն և անգլերեն ներկայացվող հոդվածները՝ «Times New Roman» տառատեսակով:

5. Հոդվածում կարող են ընդգրկվել գունավոր նկարներ, գծանկարներ և այլ վիզուալ նյութեր: Նկարները, գծանկարները և աղյուսակները տեղադրվում են տեքստում այդ մասին նշում կատարելուց հետո, նույն կամ հաջորդ էջում, պետք է ունենան վերնագրային բացատրություններ և համարակալում: Անվանումը և բացատրությունները տեղակայվում են նկարների տակ և աղյուսակների վրա (*Italic*, ***bold*** 9 տառաչափով):

6. Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները տեղադրվում են Microsoft Equation, Italic, 10 տառաչափով: Բանաձևերը ներկայացվում են առանձին տողով և մեջտեղում, իսկ հիմնականները՝ նաև համարակալվում են նույն տողի աջ անկյունում (փակագծերի մեջ):

7. Հոդվածում օգտագործվող գրական աղբյուրները (հղումները) պետք է ունենան օգտագործման հերթականությանը կամ այբբենական դասավորությանը (ըստ լեզուների) համապատասխան համարակալում և տեքստում նշվեն՝ [1], [2],...տեսքով: Երկար էլեկտրոնային հղումները պետք է կրճատվեն՝ https://u.to/ կայքի կամ այլ նմանօրինական հնարավորություններ ունեցող ծրագրերի միջոցով:

8. Հոդվածի վերջում նշվում է Գրականության ցանկը, համարակալված և ըստ ընդունված ստանդարտի՝ 10 տառաչափով: Մեկ տող ներքև նշվում է հոդվածի ներկայացման և գրախոսման ամսաթիվը, ամիսը և տարին:

9. Հանդեսում տպագրության են ընդունվում՝ արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառների գիտատեսական և գիտամեթոդական հոդվածներ՝ հետևյալ ուղղություններով.

1) կառավարում և տնտեսագիտություն,
2) տեխնոլոգիաներ,
3) գիտամեթոդական հիմնախնդիրներ:

10. Վերը նշված պահանջները բավարարելուց հետո Գիտական հրատարակությունների պատասխանատու քարտուղարին ներկայացվում են համապատասխան դրական կարծիքը և հոդվածի էլեկտրոնային տարբերակը (MS Word ֆորմատով, կրիչով կամ էլեկտրոնային փոստով (githratarakutyunner@gmail.com):

11. Հրատարակման ենթակա նյութերն ընդունվում են բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների, համապատասխան ոլորտի մասնագետի երաշխավորության կամ կարծիքի առկայության դեպքում: Ընդ որում՝ մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերում սովորողները հոդվածը ներկայացնում են համապատասխան ամբիոնի, իսկ հայցորդները և ասպիրանտները՝ գիտական ղեկավարի դրական կարծիքով:

12. Չի թույլատրվում ներկայացնել նախկինում հրատարակված կամ տպագրության համար այլ հանդեսներ ուղարկած հոդվածներ:

13. Ներկայացված նյութերը վերը նշված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չեն ընդունվում, ենթակա են վերադարձման և չեն փոխանցվում գաղտնի գրախոսման:

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՀՀ ՆԳՆ կրթամալիրի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող հոդվածները, մինչև տպագրության երաշխավորելը, ենթակա են անանուն և գաղտնի գրախոսման՝ Կրթահամալիրի համապատասխան ամբիոնների պետերի կողմից ընտրված գրախոսների կամ Գիտական հրատարակությունների խմբագրական խորհրդի անդամների կողմից՝ հոդվածը փոխանցելուց հետո տասնհինգ օրվա ընթացքում: Յուրաքանչյուր գիտահետազոտական ուղղվածության համապատասխան հոդվածը գրախոսում է տվյալ ոլորտում առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող կամ տվյալ ոլորտում ակտիվ մասնագիտական գործունեություն ծավալող անձը:

Գրախոսը աշխատանքը գնահատելիս հաշվի է առնում արդիականությունը, գիտական նորարարությունը և հիմնավորվածությունը, գործնական առաջարկները և կիրառելիությունը, միջազգային փորձի ուսումնասիրությունը և դրա տեղայնացման հնարավորությունները, տվյալ ոլորտում ակադեմիական չափանիշներին համապատասխանությունը և առաջադրված խնդրի լուծման մակարդակը: Գրախոսականում նշվում են աշխատանքի և դրական, և բացասական կողմերը:

Գործում է ակադեմիական ազատության սկզբունքը:

Տպագրման են ենթակա այն հոդվածները, որոնք երաշխավորվել են գրախոսի կողմից, իսկ հոդվածը չերաշխավորելու կամ խմբագրման ուղարկելու դեպքում գրախոսը պետք է ներկայացնի հիմնավորում:

Գրախոսականի էլեկտրոնային տարբերակը, այդ թվում՝ հոդվածը չերաշխավորելու կամ խմբագրման ուղարկելու վերաբերյալ, տրվում են բացառապես հոդվածի հեղինակին և միայն վերջինիս պահանջի դեպքում՝ առանց գրախոսող անձի ինքնության բացահայտման:

Դրական գրախոսականի առկայության դեպքում հոդվածներն ուղարկվում են տպագրության:

Գիտական հրատարակությունները հրատարակվում են տպագիր և էլեկտրոնային՝ տարեկան առնվազն երկու անգամ: Գիտական հրատարակությունների էլեկտրոնային տարբերակները տեղադրվում են Կրթահամալիրի պաշտոնական կայք էջում: